ՀԱՆՐԱՅԻՆ
ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

N-ՀՄ-02/14/25
«10» հունվար 2025թ.

«Գարանտ 24» ՍՊ ընկերություն

ՀՎՀՀ 02910767
Հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան փող., շ. 25, 14 76
Հեռ. +374 41 072007
Էլ. հասցեն՝ creative.business1920@gmail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի (մասնակի) լուծելու մասին

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության (այսուհետ նաև՝ Գնորդ) և «Գարանտ 24» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Վաճառող) միջև 04.10.2024թ. կնքված **«ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/23-2»** ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ նաև Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ նաև՝ Ապրանք):

Համաձայն Պայմանագրի 2.4.1 կետի՝ Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Տվյալ դեպքում թիվ **«ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/23-2»** պայմանագրով մատակարարվող ապրանքի ժամկետն ավարտվել է 06.12.2024 թվականին, սակայն մինչ օրս ապրանքը չի մատակարարվել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաճառողը խախտել է Պայմանագրով սահմանված պարտավորությունը՝ ժամանակին չի մատակարարել Ապրանքը,

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունը, ղեկավարվելով վերը նշված փաստական և իրավական հիմքերով, միակողմանի (մասնակի) հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համարելով այն լուծված:

Վաճառողի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 3.2 և հավելված 4.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից համապատասխանաբար՝ 990,000 (ինը հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ և 660,000 (վեց հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության 2050022082671001 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Միաժամանակ, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասն օրացուցային օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրն այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

- լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման վերը նշված գումարները («Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության 2050022082671001 հաշվեհամարին), ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Ամփոփելով վերոգրյալը, հայտնում ենք նաև, որ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Հարգանքով՝

Գործադիր տնօրեն **Հովհաննես Մովսիսյան**

Կատարող՝
Գործադիր տնօրենի տեղակալ-
ֆինանսական տնօրեն
Արարատ Հակոբյան
Հեռ: 010 65 00 15 (1-58)